ԳԱՅԱՆԵ ԳԻՆՈՅԱՆ

ՖԵՄԻՆԻՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՆԳԵԲՈՐԳ ԲԱԽՄԱՆԸ

20-րդ դարի 70-ական թվականներին զարգացավ ֆեմինիստական գիտահետազոտական ուղղությունը, որի նպատակն էր հասնել կնոջ իրավահավասարությանը հասարակական բոլոր ոլորտներում: Գրականագիտության մեջ ֆեմինիստական գիտահետազոտությունը ունի 3 հիմնական ուղղություն՝ կանանց հետազոտություն, ֆեմինիստական գրականագիտություն և դեկոնստրուկտիվ ֆեմինիզմ: Այս երեք ուղղությունները գործում են իրար կողքի և լրացնում են մեկը մյուսին:

Կանանց հետազոտությունը զբաղվում է կանանց ստեղծագործությունների և գրականության մեջ կնոջ կերպարի ներկայացման ուսումնասիրությամբ, ֆեմինիստական գրականագիտությունը և դեկոնստրուկտիվ ֆեմինիզմը զբաղվում են մեթոդական և տեսական հարցադրումներով և խնդիրներով:

Ֆեմինիստական գրականագիտության տեսության հիմքերը դրվեցին ֆրանսիական և անգլո-ամերիկյան գրականագետների կողմից: Ֆեմինիստական գրականագիտության կարևոր դեմքերն են ֆրանսիացի փիլիսոփա և գրականագետ Էլեն Սիզուն, Լյուս Իրիգարեյը և Ֆրանսիայում ապրող ազգությամբ բուլղարացի Յուլիա Կրիստեվան:

Առաջին տեսական հիմքը 1928 թվականին Վիրջինիա Վուլֆի ակնարկն էր «A room of One's Own», որտեղ նա քննարկում էր Վիլյամ Շեքսպիրի կեղծ քրոջ վարկածը, կին-գրողի ավանդական վիճակը, կանանց գրականության պատմության հնարավորությունը, ինչպես նաև ուշադրություն էր հրավիրում արական և իգական գրելաձևի պատմական տարբերությունների վրա:

1949 թվականին Սիմոն դե Բովուարի «Le Deuxieme Sexe» գիրքը ուսումնասիրություն էր իգական սեռի հասարակական կառուցվածքի, պատմության մեջ կնոջ տեղի և «կին» և «բնություն» գաղափարների համահարթեցման մասին: Կանանց հետազոտության կարևոր ուղենիշ դարձավ նրա հայտնի նախադասությունը, թե «կին չեն ծնվում, կին դառնում են»[1]: Վ.Վուլֆը և Ս.դը Բովուարը նշում են, որ կինը գրականության և արվեստի պատմության մեջ ներկա պատկեր է, նույնիսկ չափից շատ է ներկայացված, բայց պատմագրության մեջ համարյա տեղ չունի: Բովուարը իր գրքում քննարկում է գեղարվես-

[1] W.Erhart/B.Herrmann: Feministische Zugaenge. In:Grundzuege der Literaturwissenschaft.Hrsg. von H.L.Arnold/H.Detering.Muenchen.DTV.2005.S.500

տական գրականության մեջ կնոջ կերպարը, և նշում է տարածված կերպարը և երևութականը, որտեղ արտացոլվում է կանացիության-առասպելը և ներկայացվում է նոր ձևով: Երևան են գալիս նաև ամենատարբեր ձևեր, ըստ որոնց «կինը» տղամարդու տեսակի «ուրիշն» է, նա պարզ բնության արարած է, իդեալականացված բնություն կամ բացասական ֆոլիե, որում տղամարդու ինքնահաստատումը և իշխանությունը ավելի պարզ են երևում:

Ֆեմինիստական գրականագիտության քաղաքական նպատակներն էին կնոջ կերպարի ուսումնասիրությունը և կանանց գրականության պատմության ստեղծումը: Գրականագետները ձեռնամուխ եղան ուսումնասիրելու մոռացված կին գրողների կենսագրությունը, ստեղծագործությունը, փորձեցին հայտնաբերել կնոջ իրական տեղը և դերը, և հասու դարձնել այն հասարակությանը: Նրանք կանանց մոռացության մատնված ստեղծագործությունները բոլոր դարաշրջաններից հայտնաբերեցին, քննարկեցին ու մեկնաբանեցին, դրա հետ նաև հեղինակների կենսագրությունները, ձգտելով գրականության դասականների շարքը, որտեղ համարյա միայն տղամարդիկ են, հարցականի տակ դնել և ստեղծել նոր շարք, որում կանայք տեղ կգտնեն: Սակայն այս փորձը չհաջողվեց, որովհետև դասականներին դասվեցին նրանց կողմից նույն այն կին-գրողները, որոնք նախքան այդ էլ ընդունված էին, քանի որ մինչ այդ անհայտ կին-գրողների ուսումնասիրությունը ամեն դեպքում կախված էր նրանց գեղագիտական որակից և գրական արժեքից:

Դրա հետ միասին գրականության մեջ սկսվեց տղամարդ գրողների և փիլիսոփաների կողմից ստեղծված կնոջ կերպարի քննարկում: Ըստ այդ կերպարի կինը կամ սուրբ է, կամ կախարդ, կամ սուրբ Մարիամն է, կամ Եվան, կամ կույս է կամ անբարոյական: Ֆեմինիստական գրաքննադատությունը իր ուսումնասիրություններում հանգեց մի փուլի, երբ կարևորում էր արդեն կանացի գրելածը և գեղագիտությունը, ըստ որի կանացի գրելը թեմայով, ոճով ու կառուցվածքով պետք է տարբերվի տղամարդու գրելածից: Այսպիսով՝ կնոջ կերպարի քննարկումը հանգեց այս կերպարների ստեղծման գրական մեխանիզմների և ստրատեգիայի ուսումնասիրությանը: Եվ եթե ուսումնասիրությունների սկզբում հատուկ «կանանց գրականության» մասին էր խոսվում, ապա այժմ կանանց կողմից ստեղծված գրականության հանդեպ հետաքրքրությունը հանգեցրեց «կանացի գրելու» կոնցեպտին:

Կնոջ կերպարի ուսումնասիրությունը հիմնվում էր սեռերի հարաբերության կոնֆլիկտը քննարկող ստեղծագործությունների վրա: Դրանց դասական օրինակը գերմանական գրականության մեջ 19-րդ դարում Թ.Ֆոնտանեի «Էֆֆի Բրիստն» է, որտեղ նկարագրվում է կնոջ ճակատագիրը տղամարդու կողմից վերահսկվող, հայրիշխանական հասարակության մեջ: Կինը այստեղ նույնաց-

վում է «բնության» հետ: Ֆոնտանեն իր գործերով մասնակցել է կնոջ կերպարի կառուցմանը և ստեղծել է այնպիսի կանանց կերպարներ, որոնք մարմնավորում են հասարակության կողմից զոհաբերված «բնությունը»:

Կանանց գրականությունը ուներ երկու առանձնահատկություն. նախ՝ գրելածնը, և ապա այստեղ կանայք էին արտահայտում իրենց մտքերը՝ ի տարբերություն տղամարդ գրողների երկերում հանդես եկող կնոջ կերպարի: Արդեն Վիրջինիա Վուլֆն էր գրել գրողի վրա սեռի ազդեցության մասին: «Կանացի գրելու» տեսությունը, իհարկե, չի հիմնվում այն փաստի վրա, որ այն միայն կին գրողների կողմից պետք է գրվի, ինչը պատկերացնում էին «կանանց գրականություն» հասկացությամբ: «Կանացի գրելու» տեսությունը մատնանշում է գրելու կառուցվածքը, որտեղ փաստում է սեռերի հակադրության վրա հիմնված առանձնահատուկ լեզվի առաջացումը:

Կնոջ կերպարի և կանանց գրականության ուսումնասիրությունը իր զարգացման ընթացքում հատվեց մի կետում, երբ արդեն հնարավոր չէր կառչել միայն իգականությանը: Սեռերի տարբերությունը գրական տեքստերում առաջնային էր դառնում միայն սեռից բխող մեկնաբանություններում: Ասվածի փայլուն օրինակը ժամանակակից գերմանական գրականության մեջ Քրիստոֆ Հայնի «Օտար ընկերը»/1982/ նովելն է, որը կնոջ տեսանկյունից գրված տղամարդ հեղինակի ստեղծագործություն է, որտեղ ի ցույց է դրվում կնոջ տառապանքը Գերմանիայում՝ գերմանական մտածելակերպից, պետության ավտորիտար բնույթից, հետպատերազմյան շրջանում ապրած վախից, ճնշումից, դավաճանությունից: Նովելի հերոսուհին տառապում է միայնությունից, անանուն գոյությունից, որն ապրում է մարդը անկախ սեռից ժամանակակից արդյունաբերական հասարակության մեջ: Չնայած իր թվացյալ սահմանափակությանը ֆեմինիստական գրականագիտությունը այսօր էլ նորարարական է և արդիական:

Այս տարի լրանում է գերմանալեզու գրականության մեջ ֆեմինիստական ուղղության ամենակարևոր դեմքերից մեկի Ինգեբորգ Բախմանի ծննդյան 80-ամյակը:

70-ական թվականների կեսերին ԳՖՀ-ում նույնպես զարգացավ կանանց գրականությունը, որը կանանց շարժման հետևանքն էր: Գրող Զուզան Զոնտագը գրել է. «Տղամարդիկ և կանայք հանձնված են ուրիշ մարդկանց ճնշումներին: Բայց չի կարելի մոռանալ, որ բոլոր կանայք հավելյալ ճնշվում են բոլոր տղամարդկանց կողմից»[2]: Հենց այս հավելյալ ճնշման դեմ էր ուղղված կանանց շարժումը: Զ.Զոնտագի և Ս.Բովուարի անունների հետ է կապված

---

[2] R.Schnell: Geschichte der deutschsprachigen Literatur seit 1945.Stuttgart/Weimar,Metzler.1993. S.408

ԳՖՀ-ում ֆեմինիզմի զարգացումը: Ֆեմինիզմը իր ավանդույթներն ու նախորդներն ուներ Գերմանիայում, 19-րդ դարում նրա գաղափարախոսներն էին հայտնի սոցիալ-դեմոկրատներ՝ Կ.Ցետկինը, Լ.Բրաունը, Ռ.Լյուքսեմբուրգը, իսկ գրականության մեջ այն իր արտացոլումը գտավ ռոմանտիզմի և ապա ռեալիզմի ժամանակաշրջանում:

Կանանց գրականությունը ստեղծվեց կանանց կողմից կանանց համար, այն դարձավ կանանց շարժման մի մասը և նրա գեղարվեստական արտահայտությունը, այնտեղ կանայք ներկայացնում են իրենց կյանքի փորձը տղամարդու կողմից ղեկավարվող աշխարհում: Այս գրականության մեջ նկարագրվում է կնոջ ճնշվածությունը, զգացմունքների սառնությունը, միայնությունը: Այն ժամանակակից հարաբերություններում կնոջ դերի փոփոխության, ինքնագիտակցության և ինքնության փնտրտուք է: Այս գրականության լավագույն ներկայացուցիչներն են գերմանալեզու ժամանակակից գրականության մեջ Ի.Բախմանը, Կ.Շտրուբը, Վ.Շտեֆանը, Բ.Նվայգերը, Ի.Դրեվիցը, Ի.Մորգները, Բ.Լայմանը, Մ.Վանդերը, Ք.Վոլֆը, Հ.Քյոնիգսդորֆը:

Ինգեբորգ Բախմանը (1926-1973) գերմանալեզու գրականության դասականներից է: Նա հայտնի է, որպես բանաստեղծ, արձակագիր, ռադիոպիեսների հեղինակ: Սակայն գրաքննադատների համար երբեմն ավելի հետաքրքիր է այս գրողի կյանքը, որը լի է լեգենդներով, քան նրա ստեղծագործությունը: Ոմանք բարձր են գնահատում նրա հիսունական թվականների քնարերգությունը, մյուսները ավելի ուշ շրջանի արձակը, որն իհարկե, ոմանց համար անհասկանալի է ու անընդունելի: Սակայն վերջին տարիներին Բախմանի ստեղծագործությունը քննվում է նորովի, որը կապված է պատմության հանդեպ նրա վերաբերմունքով և ֆեմինիստական մոտեցումներով: Հատկապես մեծ է հետաքրքրությունը արձակի հանդեպ, որի գլխավոր թեման հայրիշխանական հասարակության պայմաններում կնոջ կյանքն է:

Երկրորդ աշխարհամարտից հետո գերմանացի գրողների միասնությունը մոտ երկու տասնամյակ ապահովում էր «Խումբ 47»-ը, որը չնայած որևէ կարգավիճակ չուներ, բայց Արևմտյան Գերմանիայում դարձել էր գրականության կարևոր ատյան:

1953 թվականի իր չորս բանաստեղծությունների ընթերցման համար Բախմանը արժանացավ այս խմբի մրցանակին, որը ապահովեց նրա հետագա հաջողությունը: «Խումբ 47»-ը քանի որ պետական հիմնարկություն չէր, դրանով ավելի մեծ և առանձնահատուկ էր համարվում և իր մրցանակակիրներին տալիս էր առանձնահատուկի շնորհ:

Բախմանի դեպքում մրցանակի առանձնահատկությանը գումարվում էր բանաստեղծուհու անձը: Այս պատճառով գրողի ստեղծագործության

քննադատությունը զերծ չէ զգացմունքայնությունից: Գրականագետ Պ.Հ. Նոյմանը հեղինակի ստեղծագործության քննադատությունը ի մի բերելով նշում է նրա աչառու քննադատության չորս պատճառ.

«Այս պատճառներից երկուսը արտիստիկ-գրական են: Նկատի ունեմ պոեզիայի լավագույն մասի արտասովոր և հավանաբար մնայուն արժեքը, ապա Ի.Բախմանի արձակը, որն իմ կարծիքով մոտ չէ հաջողվածության այն չափին, որը ստեղծվել է բանաստեղծություններով:

Սյուս երկու պատճառները կապված են կենսագրության հետ: Ես կանվանեմ դրանք ստեղծագործության անձնական մոտեցումներ: Դրանք ազդում են այս տեքստերին մեր ընկալումների վրա, որոնք շատ դժվար է վերահսկել. դրանք են բանաստեղծուհու կին լինելը և նրա մահը»[3]: Իհարկե, հեղինակի անձը միայն չէր կարող ապահովել նրա պոեզիայի հաջողությունը: Դրա համար կարևոր էր նաև այն պահը, երբ գրական ասպարեզ մտավ բանաստեղծուհին:

«Խումբ 47»-ը, ինչպես նրա հիմնադիր Հ.Պ.Ռիխտերն է նշում, նպատակ ուներ օգնել գերմանացիների առողջ քաղաքական գիտակցության ձևավորմանը, ուղղված էր հակաֆաշիստական գիտակցության ստեղծմանը, առաջարկում էր անցյալի վերլուծություն, մեղքի կոլեկտիվ խոստովանություն, ինչպես նաև դեմ էր, որ Գերմանիայի բաժանումը դիտվեր նոր պատերազմի պոտենցիալ պատճառ:

Գերմանալեզու գրականության մեջ հայտնի «Կահլշլագ»-ը նացիոնալ-սոցիալիստների կողմից գերմաներեն լեզվի, ամենից առաջ գրական, պոեզիայի լեզվի չարաշահման արձագանքն էր: Դրանից ելնելով գրողները ինչպես պոեզիայում, այնպես էլ արձակում փորձում էին անհատի հասարակական և զոյաբանական խնդիրները արտահայտել աղքատիկ, ժլատ, զգաստ լեզվով: Գրականության այսպիսի օրինակներ են Գ.Այխի հայտնի «Գույքագրում» բանաստեղծությունը, կամ Վ.Շնուրի «Թաղումը» պատմվածքը: Բախմանի առաջին ընթերցումից հետո խոսվեց «նոր պոեզիայի»[4] մասին: Իհարկե, Բախմանը իր բանաստեղծություններում օգտագործել է գերմանալեզու պոեզիայի ավանդները, հատկապես ռոմանտիզմի շրջանի, բայց նրա պոեզիան «սենսացիա» է առաջացնում, կախված հանդես գալու պահից, եթե հիշենք Կահլշլագը և Թ.Վ.Ադորնոյի հայտնի վերդիկտը /դատավճիռը/ 1949 թվականին, թե «Օսվենցիմից հետո բանաստեղծություն գրելը բարբարոսություն է»[5], որը

---

[3] K.Bartsch: Ingeborg Bachmann.Stuttgart/Weimar.Metzler.1997.S.3

[4] Նույն տեղում, էջ 5

[5] R.Schnell: Geschichte der deutschsprachigen Literatur seit1945. Stuttgart /Weimar. Metzler. 1993.S.248

սխալ ըմբռնվեց, այսինքն՝ հրաժարում պոեզիայից: Բայց ըստ Ադորնոյի պետք է ստեղծվեր պոեզիա, որը գիտակցում էր Օսվենցիմը, ֆաշիզմը, պատերազմի հետևանքները և ոչ թե «մաքուր պոեզիա» լիներ:

Բախմանի բանաստեղծությունների երկու ժողովածուները «Ապրած ժամանակ» /1953/ և «Մեծ արջի կանչը»/1956/ բանաստեղծուհուն մեծ ճանաչում և հաջողություն բերեցին, դրանով նաև դժվարացրեցին հետագայում նրա արձակի ճիշտ ընկալումը և գնահատումը: Ինգեբորգ Բախմանը ժամանակակից պոեզիայի ամենակարևոր դեմքը դարձավ, նրա պոեզիան ազատվեց ձևերի կապանքներից, բայց չհրաժարվեց ավանդական արժեքներից: Նրա բանաստեղծությունները ունեն մռայլ տրամադրվածություն և խոսում են վնասված մարդկության, խաթարված բնության, ճնշված եսի մասին: Այս բանաստեղծությունները արտահայտում են տառապանք ժամանակից, իրականության քննադատություն, փոփոխության կամք:

Պետք է նշել, որ գերմանալեզու պոեզիայի զարթոնքը ապահովեցին ոչ գերմանացի բանաստեղծներ՝ ավստրուհի Ի.Բախմանը, հրեա Պ.Ցելանը: է.Ֆրիդը այս մասին նշում է, «Գերմանիայում պատերազմից հետո խոսվում էր զրո տարվա, նոր սկզբի, իսկ Ավստրիայում գերմանացիների պարտության և իրենց հին արժեքներին վերադառնալու մասին: Երկու տեսակետներն էլ սխալ էին, քանի որ լրիվ նոր սկիզբ հնարավոր չէր, իսկ Ավստրիայի հին բարի արժեքների մեծ մասը ամենևին էլ բարի չէր: Այս պայմաններում, երբ գերմանական պոեզիան մի կողմ էր քաշվել, ավստրիական քնարերգությանը մեծ տեղ և հնարավորություն տրվեց, և ավստրիացի բանաստեղծներ Ի.Այխինգերը, Ի.Բախմանը և Պ.Ցելանը նույնպես, դարձան պոեզիայի աղքատության հակակշիռը»[6]:

Բախմանը Ավստրիայի այն յուրահատուկ ստեղծագործողներից էր, որը չընդունեց պատմական այն սուտը, թե Ավստրիան հիտլերյան Գերմանիայի առաջին զոհն էր, և հետագայում այս թեման արծարծում է իր պոեզիայում և արձակում: Այս վերաբերմունքը ավելի սուր ձևով իր գրական արտահայտությունը գտավ մեկ այլ ավստրիացի գրողի՝ Թ.Բերնհարդի ստեղծագործություններում, որոնց գլուխգործոցը «Մարում»/1986/ վեպն է:

Բախմանը 60-ական թվականներին լրիվ հրաժարվում է պոեզիայից և միայն արձակ է ստեղծագործում: Նրա արձակը՝ «Երեսուն տարեկանում» /1961/, «Զիմուլտան»/1972/ պատմվածքների ժողովածուները և «Մալինա» /1971/ վեպը, սակայն, մեծ արձագանք չգտան:

---

[6] K.Bartsch: Ingeborg Bachmann.Stuttgart/Weimar.Metzler.1997.S.51

«Մալինա» վեպը մի կնոջ մասին է, որը որոնում է իր ինքնությունը և կանացի սուբյեկտիվությունը: «Ֆրանցայի դեպքը» և «Ռեքվիեմ Ֆանի Գոլդմանի համար» անավարտ վեպերի հետ «Մալինան» կազմում է վեպերի մի շարք, որը կրում է մեկ ընդհանուր անուն՝ «Մահվան ձևեր»: «Մալինա» վեպում և մյուս մահվան ձևեր-ստեղծագործություններում կանայք ճնշվում են տղամարդկանց կողմից տարբեր ձևերով և ոչնչացվում են: «Ֆրանցայի դեպքը» մի կնոջ պատմություն է, որն իր հոգեվերլուծաբան ամուսնու ուսումնասիրությունների օբյեկտն է դառնում: Թեման հիշեցնում է ավստրիացի գրող Թոմաս Բերնհարդի «Կրագործարան»/1973/ վեպը: «Մալինա» վեպում ինքնության խնդիրը կյանքի խնդիր է, վեպի հերոսուհին ինքնության կորստի դեմ հիշողության վերլուծություն է կատարում, որը հնարավոր կդարձնի հաղթահարել անցյալը և գտնել ինքնությունը, այն քննարկում է լռության մատնված հիշողությունը. «Ես խոսում եմ, ուրեմն կամ»[7] նշանաբանով:

Գրողի արձակը թույլ է տալիս–ցրան բնորոշել որպես 70-ական թվականներին հրատապ կանանց գրականության ներկայացուցիչ կամ առաջնորդ: Սա պատճառ է դառնում, որ Բախմանի ստեղծագործությունը քննադատվի կին գրողների հանդեպ թշնամանքով: Իհարկե, գրողի արձակում արտահայտվում է որոշակի ատելություն տղամարդկանց հանդեպ: Բախմանը կոչ է անում հանդես բերել սեռին հատուկ ըմբռնում, որը, հատկապես, ցայտուն է արտահայտված «Մալինա» վեպում: Հեղինակը, սակայն, չի ընդունում, երբ իրեն նույնացնում են իր հերոսուհիների հետ, որոնք ատում են տղամարդկանց: Նրա կարծիքով դա ընդամենը արվեստ է:

Իր ստեղծագործության մեջ Բախմանը ձգտում է ցույց տալ, որ անհրաժեշտ է լեզվի նոր կիրառություն և պետք է հաղթահարել հասարակության կառուցումից և դեկավարումից կնոջը հեռու պահելու մտածելակերպը և գործելակերպը: Այս տեսակետը ավստրիացի բանաստեղծուհուն դարձրեց կանանց շարժման կուռքը:

---

[7] Նույն տեղում, էջ 35: